Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

26.12.2019 **ք.Երևան**

Գիտական խորհրդի 34 անդամներից ներկ էին 29-ը:

Գիտական խորհրդի անդամները հաստատեցին նիստի օրակարգը:

Օրակարգ՝

1.2019-2020 ուստարվա մասնագիտական պրակտիկայի արդյունքների ամփոփում:

(Զեկ.՝ պրակտիկայի և կարիերայի բաժնի պետ Մ.Բարբարյան)

2.Հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

(Զեկ.՝ հանձնաժողովների նախագահներ,

մագիստրատուրայի բաժնի պետ դոցենտ Ա.Ստեփանյան)

3.Վերահանձնման տեղեկագրերի ձևաչափի փոփոխման մասին:

(Զեկ.՝ ուսումնագիտական աշխատանքների գծով

պրոռեկտոր, պրոֆեսոր Գ.Սարգսյան)

4.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգի հաստատման մասին:

(Զեկ.՝ իրվախորհրդատու Օ.Պետրոսյան)

5.ՀՖԿՍՊԻ 10 լավագույն մարզիկների պարգևատրման մասին:

(Զեկ.՝ ՖԻՄԱ նախագահ Խ.Հարությունյան)

6.Գիտական կոչումներ շնորհելու հանձնաժողովում փոփոխություն կատարելու մասին:

1.ԼՍԵՑԻՆ՝ պրակտիկայի ղեկավար Մ.Բարբարյանին: Նա ներկայացրեց մասնագիտական պրակտիկայի արդյունքները:

(Պրակտիկայի արդյունքները կցվում են)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաստատել 2019-2020 ուստարվա մասնագիտական պրակտիկայի արդյունքները:

2.Հաստատել գիտական խորհրդի որոշումը:

2.ԼՍԵՑԻՆ՝ մագիստրատուրայի բաժնի պետ Ա.Ստեփանյանի տեղեկատվությունը մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ:

(Հաշվետվությունը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Հ.Բաբայանը առաջարկեց ավելի ուշադիր շարադրել հաշվետվությունները, որտեղ կան հակասություններ: Հաշվետվությունները խմբագրել:

Պրոֆեսոր Գ.Սարգսյանը փաստեց, որ հանձնաժողովների նախագահները նույն առաջարկություններն են ներկայացնում: Խնդիրները կրկնվում են:

Ռեկտոր պրոֆեսոր Դ.Խիթարյանը առաջարկեց թեմաների ընտրության ցանկը փոխել, վերնագրերը ձևակերպել ըստ ուղղվածությունների: Անհրաժեշտ է կարգ մշակել ղեկավարների վերաբերյալ:

Պրոֆեսոր Ա.Ստեփանյանը տեղեկացրեց, որ բոլոր ամբիոններում մագիստրանտները ազատ են ընտրության մեջ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել հեռակա ուսուցման մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները:

3.ԼՍԵՑԻՆ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց վերահանձնման տեղեկագրերի նոր ձևաչափը:

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Հ.Մելքոնյանը, պրոֆեսոր Հ.Բաբայանը, դոցենտ Խ.Հարությունյանը, դոցենտ Մ.Ասատրյանը:

Նրանք առաջարկեցին հանել ստուգում բառը, ներկայացնել երկու տեղեկագրեր վերահանձնման համար:

(Ձևաչափերը կցվում են)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Հաստատել ՀՖԿՍՊԻ քննության վերահանձնման տեղեկագիրը առաջարկած ձևաչափով:

2.Հաստատել ՀՖԿՍՊԻ ստուգարքների վերահանձնման տեղեկագիրը առաջարկված ձևաչափով:

4.ԼՍԵՑԻՆ՝ իրավախորհրդատու Օ.Պետրոսյանին: Նա ներկայացրեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը:

(Ընթացակարգը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻ՝ հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը:

5.ԼՍԵՑԻՆ՝ ՖԻՄԱ-ի նախագահ Խ.Հարությունյանին: Նա ներկայացրեց ինստիտուտի 10 լավագույն մարզիկների ցանկը:

(Ցանկը կցվում է)

Ռեկտոր, պրոֆեսոր Դ.Խիթարյանը առաջարկեց կատարել դրամական պարգևատրումներ 10 լավագույն մարզիկներին ՝ յուրաքանչյուրին 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով, մասնակիցներին սերտիֆիկատներ հանձնել, գումարը փոխանցելով հաշվեհամարներին:

Նա առաջարկեց պարգևատրել նաև ուսանողական խաղերին մասնակցած՝ չեմպիոն դարձած ուսանողներին և նրանց մարզիչներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. հաստատել ՀՖԿՍՊԻ 10 լավագույն մարզիկների ցանկը՝

Տե-ղը	Անունը, ազգանունը	Արդյունքը	Մարզաձևը	Միա-վորը
1	Մրկրտչյան Հակոբ	Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն	Ծանրամարտ	106
2	Հարությունյան Արսեն	Եվրոպայի չեմպիոն	Ազատ ըմբշ.	62
3	Գալստյան Սլավիկ	Աշխարհի մեծ. առաջնութ.3-րդ մրց.	Հ/հ ըմբշ.	60
4	Ասլանյան Կարեն	Եվրոպայի մեծահասակների առաջ. 3-րդ մրց.	Հ/հ ըմբշ.	47
5	Ավետիսյան Արթուր	Համաշխարհային ուսանողական խաղեր՝ օղակներ 1-ին մրց., աշխարհի գավաթ՝ օղակներ 3-րդ մրց.	Մարմնամար-զություն	42
6	Ներսիսյան Գոռ	Եվրոպական Խաղերի 3-րդ մրցանակ.	Բռնցքամարտ	38
7	Մելիքյան Արմեն	Աշխարհի 23 տ. չեմպիոն	Հ/հ ըմբշ.	32
8	Թևանյան Վազգեն	Եվրոպայի 23 տ. չեմպիոն	Ազատ ըմբշ.	28
9	Լալայան Վարազդատ	Աշխարհի և Եվրոպայի երիտ. չեմպիոն	Ծանրամարտ	26
10	Ամոյան Մալխաս	Եվրոպայի երիտ. չեմպիոն	Հ/հ ըմբշ.	21

ՀՖԿՍՊԻ լավագույն հաշմանդամ մարզիկները

1. Ստեփանյան Սարգիս՝ բազկամարտ

2. Բեգլարյան Գևորգ՝ սեղանի թենիս

2.Յուրաքանչյուր մարզիկին պարգևատրել 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

3.ՀՖԿՍՊԻ ուսանողներին, որոնք դարձել են ուսանողական խաղերի չեմպիոններ պարգևատրել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամի չափով:

4.Չեմպիոնների մարզիչներին պարգևատրել 10.000 (տաս հազար) ՀՀ դրամի չափով:

5.ՖԻՄԱ նախագահ Խ.Հարությունյանին պարգևատրել 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

6.ԼՍԵՑԻՆ՝ ռեկտոր, պրոֆեսոր Դ.Խիթարյանին: Նա առաջարկեց, հաշվի առնելով խորհրդի անդամների կարծիքը, գիտական կոչումներ շնորհելու, խմբագրական-հրատարակչական հանձնաժողովում ընդգրկել դոցենտ Ա.Հակոբյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ գիտական կոչումներ շնորհելու, խմբագրական-հրատարակչական հանձնաժողովում ընդգրկել կիրառական մարզաձևերի ամբիոնի դոցենտ Արմեն Հակոբյանին:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Ս.ԽԻԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝ Մ.Ռ.ԱՍԱՏՐՅԱՆ